ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Chatham house» ձևաչափով փորձագիտական հանդիպման Արդյունքների վերլուծություն

«Մասնակցային մոնիթորինգ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագիրն իրականացվում է « «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկերներ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ-ի և «Տեղեկատվական համակարգերի զարգացման եվ վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողականերկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն ծրագիրն իրականացնող կոնսորցիումը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Գյումրի, 2019

«Մասնակցային մոնիթորինգ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակում
առանց հողումների իրավունքի կլոր սեղան քննարկում:

2019 թվ-ի հունվարի 29-ին Գյումրիում տեղի ունեցավ Chatham house ձևաչափով առանց հողումների իրավունքի փորձագիտական հանդիպում քննարկում, որին մասնակցում էին ներհամայնքային ճանապարհների պահպանության ոլորտի փորձագետներ, ՏԻՄ և «Տարածքային կառավարման և զարգացման» նախարարության ներկայացուցիչներ: Զեկույցի հիմքում ընկած է ներհամայնքային ճանապարհների պահպանության ոլորտում արված հետազոտությունը, որը բաղկացած է եղել երկու բաղադրիչներից: **Առաջին բաղադրիչի** շրջանակներում իրականացվել է մատուցվող ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատում, որի համար կիրառվել է քանակական դեմ առ դեմ հարցումների մեթոդը՝ քվոտային ընտրանքի հիման վրա: **Երկրորդ բաղադրիչի** շրջանակներում խոշորացված համայնքներում իրականացվել է ներհամայնքային ճանապարհների մոնիթորինգ: Խոշորացված համայնքների մաս կազմող բոլոր բնակավայրերում դիտարկման են ենթարկվել փողոցի երթևեկելի մասի ծածկույթը, մայթերը, եզրաքարերը, ջրահեռացման վաքերը, ճանապարհային նշանները և գծանշումները, փողոցի երկայնքով անգտանգության միջոցառումների իրականացումը, փողոցի մաքրությունը և բարեկարգվածությունը:
Փորձագիտական հանդիպման ընթացքում մանրամասն ներկայացվեց զեկույցի արդյունքները և գրաֆիկներով պատկերվեց խնդիրները առանձին ցուցանիշների հետ կապված: Հանդիպման արդյունքում ստեղծված զեկույցը կներառվի Ներհամայնքային ճանապարհների սպասարկման զեկույցում:



Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Ախուրյան համայնքի բնակավայրերի համար

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Ասֆալտաբետոնե ծածկի առկայություն		Դիտարկված փողոցի տիպը ըստ երթևեկելի մասի ծածկույթի տիպի (քառակուսի մետր)		
		Առկա է	Առկա չէ	Ասֆալտապատ	Խճապատ	Գրունտային
Ախուրյան	11	4	7	33,369	3,651	25,653
Այգաբաց	6	2	4	28,637	3,215	15,330
Արևիկ	8	1	7	745	8,507	28,539
Բասեն	9	1	8	18,897	0	48,703
Կամո	7	2	5	1,505	8,471	2,834
Կառնուտ	6	2	4	19,256	3,740	25,068
Հովիտ	5	1	4	53	534	566
Ջրառատ	7	1	6	5,820	5,513	0

Ընդամենը	59	13	46	**108,282**	**33,631**	**146,692**

Դիտարկված փողոցների երթևեկելի մասի ծածկույթը:

Բնակավայր	Ընդամենը դիտարկված փողոցներ (քանակ)	Մայթերի առկայություն		
		Առկա են	Առկա են, սակայն միայն մի կողմում	Առկա չեն
Ախուրյան	11	2	2	7
Այգաբաց	6	1	1	4
Արևիկ	8		2	6
Բասեն	9			9
Կամո	7	2		5
Կառնուտ	6		2	4
Հովիտ	5			5
Ջրառատ	7	1		6
Ընդամենը	59	**6**	**7**	**46**

Մայթերի առկայությունը և եզրաքարերի վիճակը:



Դիտարկված փողոցների երթևեկելի մասերն ըստ ծածկույթի տիպի

Քննարկումներ և առաջարկություններ.

Բացահայտված խնդիրների շուրջ ծավալված քննարկումների արդյունքում հնչեցին մի շարք առաջարկներ.

- Համայնքային խնդիրներն, այդ թվում՝ ճանապարհների պահպանումն ու շահագործումն առավել արդյունավետ իրականացնելու համար տեղական իշխանություններին օժտել համապատասխան լիազորություններով և դրամահայթայթման նոր գործիքներով և մեխանիզմներով, մասնավորապես,
- զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից ֆինանսական շուկայի գործիքների ընձեռած հնարավորություններից օգտվելու կարգավորիչ դաշտը, օժանդակել այդ գործիքների հնարավորություններից ՏԻՄ-երի արդյունավետ օգտվելու պրակտիկայի ձևավորմանը, դրանով հնարավորություն տալ համայնքներին, օրինակ՝ ներգրավելու երկարաժամկետ փողեր առավել ընդգրկուն և արդյունավետ ծրագրեր իրականացնելու համար,

- միջհամայնքային, ինչպես նաև համայնքի տարածքով անցնող հանրապետական ճանապարհների պահպանումն ու շահագործումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով դիտարկել ՏԻՄ-երին համապատասխան պատվիրակված կամ սեփական լիազորություններով օժտելու հնարավորությունը, այդ լիազորություններն իրականացնելու համար ՏԻՄ-ի բյուջեն ապահովել լիազորությունն իրականացնելու համապատասխան ֆինանսական միջոցներով և աղբյուրներով: Հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ խոշորացման արդյունքում փոփոխվել են մի շարք միջհամայնքային ճանապարհների կարգավիճակները, որոնց պահպանման և սպասարկման համար ՏԻՄ բյուջեն չի օժտվել համապատասխան ֆինանսական միջոցներով, չեն սահմանվել համապատասխան նոր աղբյուրներ:
- Խնդիր է ճանապարհների պահպանման և շահագործման ոլորտում կառավարչական տարբեր մարմինների կողմից ընդունվող որոշումների դրույթների համաձայնեցումը և միասնական ստանդարտներին դրանց համահունչ դարձնելն ու համապատասխանության ապահովումը: Անհրաժեշտ է օժանդակել այդ հարցերի շուրջ ՏԻՄ կարողությունների զարգացմանը:
- Օժանդակել ՏԻՄ-երին սեփական գործիքներով (նորմերի սահմանում, կարգերի ընդունում, վճարների, տուրքերի և այլ գործիքներ) ճանապարհների պահպանման և շահագործման նկատմամբ արդյունավետ հսկողություն իրականացնելու պրակտիկայի զարգացման գործում:
- Օժանդակել համայնքներին՝ լինելու առավել ճկուն, համալիր հետազոտությունների հիման վրա, հաշվի առնելով տեղական յուրահատկությունները (բնակչության թիվ, աշխարհագրական դիրք, բնակլիմայական պայմաններ), մշակելու և ներդնելու ճանապարհների պահպանման և շահագործման համայնքին հատուկ նորմեր:
- Օժանդակել միջհամայնքային համագործակցության զարգացմանը:
- Միջոցներ ձեռնարկել համայնքներում ռազմավարական առաջնահերթությունները սահմանելու գործընթացում համայնքի բնակչության լայն ընդգրկումն ապահովելու նպատակով: Բնակչության ներգրավումը ճանապարհների պահպանման և սպասարկման գործընթացում առավել արդյունավետ և շահագրգիռ դարձնելու նպատակով կազմակերպել համայնքային լսումներ, հանրային քննարկումներ:
- Ռազմավարական առաջնահերթությունները սահմանելու արդյունավետ գործընթաց ապահովելու նպատակով ներդնել առավել մարդակենտրոն սկզբունքներ և չափորոշիչներ, օրինակ՝ որքանով է որևէ ծրագրի, մասնավորապես՝ կոնկրետ ճանապարհի պահպանումն ու սպասարկումը նպաստում բնակչության տնտեսական և սոցիալական կարիքների բավարարմանը, իրականացնել այդ կարիքների գնահատումներ, նախապատվությունը տալ հատկապես այնպիսի ծրագրերի ֆինանսավորման ու իրականացմանը, որոնք ուղղակի ազդեցություն են ունենում բնակչի տնտեսական ու սոցիալական հոգսը թեթևացնելու վրա:
- Ներհամայնքային ճանապարհների պահպանման և շահագործման ոլորտում բնակչության օժանդակությունը և շահագրգիռ մասնակցությունն ապահովելու նպատակով համագործակցություն ծավալել համայնքներում կամ մարզում գործող քաղաքացիական հասարակության կառույցների (ՔՀԿ) հետ: Մշակել և իրականացնել կապիտալ ներդրումներ չպահանջող, բնակչության վարքագծի փոփոխությանն ուղղված, բնակիչների շահագրգիռ մասնակցությունը խթանող, մասնակցային մշակույթ ձևավորող ծրագրեր ինչպես սեփական միջոցների, այնպես էլ ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ միջազգային զարգացման գործընկերներին դիմելու և լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ ձևավորելու և միջոցներ ներգրավելու հաշվին:
- ՏԻՄ լիազորությունների և մատուցվող ծառայությունների մշտադիտարկումն անհրաժեշտ դարձնել շարունակական գործընթաց՝ հիմնված ՏԻՄ-երի և պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված միասնական մեթոդաբանության վրա: Դա թույլ կտա կողմերին ընկալելու գործընթացը՝ որպես համագործակցային աշխատանք և, որի արդյունքներն իրապես կարող են ծառայել լիազորությունների իրականացման և մատուցվող ծառայությունների արդյունավետության, մարդակենտրոնության և նպատակայնության բարձրացմանը: Մոնիտորինգի զեկույցը պետք է դառնա տեղական, մարզային և հանրապետական

իշխանությունների սեղանի աշխատանքային փաստաթուղթ, որի արդյունքների հիման վրա կընդունվեն նոր որոշումները, կձևավորվեն կամ կլրամշակվեն համայնքների զարգացման ռազմավարությունները: